

ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

Կարճատև հիվանդությունից հետո, 73 տարեկան հասակում, վախճանվեց հայ-վրացական բանասիրության երախտավոր, Հայաստանի ԳԱ քրդակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆ. Լեոն Մելիքսեթ-Բեկը: Ուղիղ հիսուն տարի առաջ, երբ Լ. Մելիքսեթ-Բեկը նոր էր ավարտել Օդեսայի համալսարանի իրավաբանական և պատմաբանասիրական ֆակուլտետները, ակադ. Ն. Մառը հանձինս նրա՝ նկատեց հայ-վրացական բանասիրության մի հուսալի մասնագետի և առաջարկեց աշխատակցել նշանավոր «Христианский Восток» հանդեսին: Օդեսայի համալսարանի հայազգի ուսանողը, տակավին 19—23 տարեկան, արդեն հանաչված մասնագետ էր. նրա ստորագրությամբ լույս էին տեսել մի քանի արժեքավոր հոդվածներ՝ ի սկզբանե գիտական հարցադրմամբ և, որ շատ կարևոր է, սկզբնաղբյուրների վստահելի իմացությամբ: Այս տարիներին Լեոն Մելիքսեթ-Բեկը ամենից շատ հետաբերվում էր Ռուսաստանի սահմաններում դրսևող հայկական գաղթավայրերի պատմության ուսումնասիրությամբ: Այդ նպատակով նա մասնակցում էր զանազան հնագիտական ընկերությունների կազմակերպած պեղումներին, հրապարակում իր կողմից վերծանված արձանագրությունները: Ն. Մառի համար ուշագրավ էր երիտասարդ մասնագետի բազմակողմանի կարողությունը, հետաբերությունների լայն շրջանն ու իսկապես բանասիրական աշխատանքը: Ուսանողական տարիներին Լ. Մելիքսեթ-Բեկը արևելագետների ուշադրությանն առաջարկեց «Հայկական հնությունները Ինսարաբիայում», «Ռուսաստանի հարավում ապրող հայոց պատմությունը նյութերից», «Քերթևեկի հնօրյա վանքը Գորիի գավառում», «Վրաց ազգակցությունը իսպանացիների հետ՝ ըստ հին աղբյուրների» (1911 թ.) և այլ արժեքավոր ուսումնասիրություններ:



Լ. Մելիքսեթ-Բեկի հրապարակումները նոր խոսք էին և արժանացան Ն. Մառի, Ա. Խախանավի, Լ. Քալանթարի, Հ. Մովսիսյանի, Է. Յոն-Շտերնի և այլոց գրախոսությանն ու դրավատանքին:

Համալսարանավարտ Մելիքսեթ-Բեկը 1913 թվականին վերադարձավ Թիֆլիս և զանազան հայագիտական առարկաներ դասավանդելուց բացի՝ խորամուխ եղավ Հայաստանի ու Վրաստանի պատմական աշխարհագրության ուսումնասիրմանը: Գրաբարի, հին վրագերենի ու դասական հունարենի հիմնավոր իմացությունը նրան հնարավորություն տվեց զբաղվել սկզբնաղբյուրների ուսումնասիրմամբ: Բանասիրական ախտանքի լավագույն նմուշ է Լ. Մելիքսեթ-Բեկի «Վրաստանի լուսավորչի իսկական անվան հարցի շուրջ» (1914 թ.) ուսումնասիրությունը, որ հարցի հյուսիսեկն հնությունից բացի՝ մատենագիտական զարմանալի ամբողջություն կա: Ի դեպ, հանդուրյալ պրոֆեսորի աշխատություններին լավամտոր մասնագետները միշտ երախտագիտությամբ են օգտվում նրա կազմած մատենագիտությունից, եթե նույնիսկ դա վերաբերի միայն հղումներին:

1918 թվականին Լ. Մելիսթ-Քեկը աշխատանքի է անցնում Քիֆիսի համալսարանում, որ հայագիտությունը արևելագիտական հիմնական բնագավառներից մեկն էր (այդպես է և այժմ): Ակադ. Ն. Մառի աշակերտներ Խ. Ջավախիշվիլին ու Ա. Շանիձեն բազմամուտ հայագետներ էին, և Լ. Մելիսթ-Քեկի հրավիրումը համալսարան՝ առավել ևս հիմնավոր դարձրեց գիտության այդ բնագավառը՝ Վրաստանում: Խ պատիվ վրացագետների պիտի ասել, որ նրանք հայագիտությունը շահմանափակեցին սոսկ հին կամ նոր հայերենի ուսումնասիրությամբ. տասնամյակներ շարունակ (և այժմ էլ) ամբիոնի տնօրինությամբ դասախոսվում է հայոց պատմություն, բարբառագիտություն, գրականության պատմություն. տեխնապարնություն և մի շարք այլ առարկաներ: Է. Մելիսթ-Քեկը անձամբ ինքն էր կրում այս առարկաներից շատերի դասավանդումը:

Է. Մելիսթ-Քեկը 1918—1922 թվականների ընթացքում հրատարակում է շուրջ հիսուն աշխատություն՝ տարբեր ծավալի ու բնույթի: Նա հաջողությամբ հանձնում է ղոկտորական ֆենությունները (հայ-վրաց-հունական բանասիրության գծով) և 1928 թվականին Քիֆիսի պետական համալսարանում պաշտպանում ղոկտորական դիսերտացիա: Բանասիրությամբ և առհասարակ հին հուշարձանների ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների համար դժվար է ծավալուն հատորներ մատենաշարել. տարիներ շարունակ պրպտումներ կատարելոց հետո միայն հնարավոր է դառնում ամփոփել աշխատանքը: Առն Մելիսթ-Քեկը առաջին անգամ այդ պիսի ամփոփում կատարեց 1928 թվականին՝ հրատարակելով «Վարդապետ հսյոց հիսիսային կողմանց» ուշագրավ աշխատությունը (վրացերեն): 'Իժվար է ասել՝ այս աշխատանքն ավելի պատմություն է, քե գրականություն, իրավագիտություն: 11—13-րդ դարերի Գուրա՝ր հայոց համար Վրաստան էր, վրացիների համար՝ Հայաստան (Սուվխիթի): Ճիշտ այդպիսի բնույթ ունի և այսօրի կրթօջախներում տեճած մշակույթը: Պրոֆ. Լ. Մելիսթ-Քեկը շահմանափակվեց միայն մատենագրական աղբյուրներով. հարցերի անաշառ ու գիտական լուծման համար նա ֆենության է Լեքարկում տեղիս պատմությունը, համադրում վիմագիր ու այլ բնույթի վկայություններ, նշում հայոց ու վրաց սկզբնաղբյուրներին վերաբերող մի շարք հարցեր: Այդ իսկ պատհառով էլ հիշյալ աշխատությունը մնայուն գործ է, իսկ նրանում արծարծված հարցերի հիմնական մասը՝ արդեն լուծված: Հայ-վրացական միջնադարյան մշակութային-պատմական փոխհարաբերությունները լուսարանելիս պահանջվում է ոչ միայն պատմության ու գրականության, այլ նաև՝ Լկեղեցու ու Լկեղեցական գրականության իմացություն: Քեկ այս բնագավառին վերաբերող շատ հարցեր Ն. Մառի կողմից արծարծվել ու կանխանջվել էին, բայց լուրջ մեագրություն համար դեռ շատ էին դժվարությունները:

Լ. Մելիսթ-Քեկը սոսկ արձանագրող-բանասեր չէր, այլ նաև Լեռույթի կուրյունը քափանցող մասնագետ, շրջահայաց ու անաշառ: Այս սկզբունքով է գրված նրա «Վարդապետ հսյոց...»:

Գրականության պատմությանը վերաբերող աշխատություններից նշանավոր է «Հայ հին գրականության պատմություն» ձեռնարկը (1941 թ., վրացերեն): Այն ժամանակ դեռևս չկար Մ. Արեղյանի Լեկհատուրյակը, որ դեռ Լեկար ժամանակ կմնա իրև միակն ու անփոխարինելին: Պրոֆ. Լ. Մելիսթ-Քեկը գրում է ոչ քե սոսկ գեղարվեստական գրականության պատմություն. այլ հայ մատենագրության պատմություն (որ ավելի դժվար է ու աբրողական), որոշակի կիրառելով ակադ. Կ. Կեկելիձեի նշանավոր Լեկհատուրյակի փորձն ու պարբերացման մեթոդը: Լ. Մելիսթ-Քեկը, ի բարեբախտություն, հեռու էր այլ ժողովուրդների մշակութային իմացության սահմանափակումից և դրա համար էլ խուսափում էր շտապողական ընդհանրացումից. գրում էր առավել պատասխանատվությամբ:

Պրոֆ. Լ. Մելիսթ-Քեկը հիսուն տարվա բեղմնավոր աշխատանքի ընթացքում հայտնաբերել, ուսումնասիրել ու հրատարակել է տասնյակ գրական Լեկեր, բարգմանություններ հայերենից-վրացերեն և վրացերենից-հայերեն: Նրան Լեկ պարտական Ագաթանգեղոսի և Ստ. Օրբելյանի վրացերեն համառոտ պատմումների հրատարակության համար: Առանձնապես մեծ է նրա Լեախտիբը սայարնովագիտության զարգացման գործում: Մելիսթ-Քեկի 1930 թվականին հրատարակած մեագրությունը իր բազմալողմանիությամբ ու աղբյուրագիտական բնույթով դեռ այսօր էլ հաննարեղ գուսանին եվիրված լավագույն Լեկասիրություններից է: Առն Մելիսթ-Քեկը հայտնի է նաև գեղարվեստական բարգմանություններով, այդ թվում՝ Սայար-Նովայի հայերեն խաղերի վրացերեն բարգմանությամբ:

Լ. Մելիսթ-Քեկը լավագույն աղբյուրագետներից էր. հանրահայտ է նրա «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» Լեահատուր աշխատությունը: Այստեղ բարգմանարար Զեկելյացվող տեխտին հաջորդում Լե գիտական այնպիսի մանրագնին ձանորագրություններ.

որ երախտավոր գիտնականը զարմացնում է իր ընդգրկմամբ, բազմաբնույթ նյութի անկուրուստ համառոտությամբ: Ինչն հաջողությամբ նա հավանում ու վրացագետների ուշադրությանն է. առաջաբերում Վրաստանին վերաբերող հայոց աղբյուրները: Արժևավոր է, օրինակ, ՄԼժովեցու «Պատմության» համառոտ բարգձանությունը վրացերեն (1937 թ.), կամ «Վրաստանի պատմության գրավոր աղբյուրները» ֆառտարանի (միայն անունն է ֆառտարան) երկրորդ լրացումը, որ մեկ առ մեկ բավարկված ու մատնանշված են Վրաստանին վերաբերող հայոց աղբյուրները և մեծապես հեշտացնում է հայոց մատենագրության մեջ համապատասխան սկզբնաղբյուր որոնող վրացագետի գործը: Պրոֆ. Լ. Մելիք-Ֆեկր տասնամյակներ շարունակ Հայաստանի պատմություն էր դասախոսում համալսարանում, հետեղակուներեն լեզուով բազմաթիվ հանգուցային հարցեր: Պատմագրության մեջ խոշորագույն ներդրում են հանգուցյալի «Մեղալիքյան կուլտուրան Վրաստանում», «Արմագենի», «Հին Ռուսաստանն ու հայերը» և բազմաթիվ այլ աշխատություններ: Այս տոթիքով էլ նա վերծանում ու հրատարակում էր արձանագրություններ (հատկապես նշանավոր է 1952 թ. ֆառալեզվյան արձանագրության հայտնաբերումը), ուսումնասիրում էր նյութական կուլտուրայի հուշարձանները Հայաստանում ու Վրաստանում: Իհանգամայն նորություն էր նրա «Ձևոթր (աչր) ավատական Վրաստանի նյութական կուլտուրայի հուշարձաններում» ոչ ծավալուն աշխատասիրությունը:

Մելիքսեր-Ֆեկր բազմիցս անդրադառնում էր տարբեր ժողովուրդների պատմական փոխհարաբերության հարցերին (Armeno-Hebraica, հայ-աղվանական, վրաց-աղվանական, հայ-վրաց-բյուզանդական, ռուս-հայկական և այլն): Եւ արձագանքել է հայոց, վրացիների (նաև եզրիսացոց) աղվանների ծագումնաբանության նետ կապված հարցերին. հանախ դիմել լեզվական իրողությունների նկատառմանը:

Լ. Մելիքսեր-Ֆեկր հայտնի է նաև որպես լեզվաբան: Տարիներ շարունակ նա դասախոսում էր ընդհանուր լեզվաբանություն, լեզվաբանության պատմություն: Նշանակալի է նրա երախտիք վրաց ուսանողության համար գրարարի ձեռնարկ կազմելու, «Մաղկաբաղ»-եր հրատարակելու գործում: Նրա հեղինակությամբ երկիցս լույս է տեսել «Իրաբարի տարրական ֆերականություն»:

Ձկա հայագիտության ու վրացագիտության որևէ բնագավառ, որտեղ Երախտիք չունենա հանգուցյալ պրոֆեսորը: Մեծ է նրա վաստակը ազգագրության ու նշգրիտ գիտությունների պատմության ասպարեզում: Անոն Մելիքսեր-Ֆեկր խոշորագույն մատենագետ էր: Անդադրուն ու բեղմնավոր գիտնականը շէր սահմանափակվում միայն աշխատություններ հրապարակելով: Քսանական քվականներին, երբ վտանգվում էին հին հուշարձանները, կորչում գրչագիր մատյասները, Լ. Մելիքսեր-Ֆեկր շրջում էր գավառից-գավառ, գյուղից-գյուղ և փրկում մատյանները: Նրա շանքերով է հավանվել այժմ Վրաստանում պահվող հայկական ձեռագրերի հավաքածուի նշանակալի մասը: Մելիքսեր-Ֆեկր բազմիցս հրապարակային Ելույթ է ունեցել՝ պարսավելով վանդալիզմը:

Անոն Մելիքսեր-Ֆեկր ուներ Երեւ մայրենի լեզու և հավասարապես անշահախնդիր էր իր իմացությունը կիրառելիս: Նա միակ գիտնականն էր, որ ստեղծագործում էր հայերեն, վրացերեն, ռուսերեն: Այս բացառիկ կարողությունը Երեւմն հասու չէ որոշ մասնագետների: Լ. Մելիքսեր-Ֆեկր վաստակը լրիվ նանաչելու համար պետք է նանաչել նրա երկրորդ մայրենի լեզվով շարադրած գործերը:

Հանգուցյալը նաև լավ ուսուցիչ էր. տասնյակ մասնագետներ է պատրաստել, հարյուրավոր գրեր գրախոսել, շատ-շատերին գիտական աստիճան շնորհել:

Ակադ. Ն. Մառի մահվան կապակցությամբ Լ. Մելիքսեր-Ֆեկր բարոյական հուշարձան կերտելու մասին էր գրում: Հարկավ՝ նա ինքր ևս արժանի է մի այդպիսի հուշարձանի՝ անտիպ գործերի Ետմահու հրատարակությամբ: Տարբեր աոթիքով գրված նրա ծանոթագրություններից տեղեկանում ենք, որ դեռ անտիպ են Արսեն Սափարացու «Վասն բաժանման»-ի համեմատական բնագիրը, «Հայ-վրացերեն համառոտ բառարանը», «Հայկական արձանագրությունները Վրաստանում», «Վրաց աղբյուրների» շորորող հատորը և այլ գործեր:

Պրոֆ. Լ. Մելիքսեր-Ֆեկրի մահվամբ հայ-վրացական բանասիրությունը կորցրեց իր բազմաբախտ մշակին:

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԳՅԱՆ